ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

11 փետրվարի 2025 թվական

4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 16.30

Տիգրան Ավինյան

-Ավագանու հարգելի՝ անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 12 անդամ՝

Գրիգոր Իսկանդարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Արշակ Սարգսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Վահան Ավագյան՝ «Հանրային ձայն» խմբակցություն,
Արմենակ Դանիելյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Հայկ Գրիգորյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Ռոբերտ Ծովյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Մանուկ Սուքիասյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Գևորգ Ստեփանյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Սամվել Հակոբյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Իոսիֆ Կուբատյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Կիմա Աբրահամյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Արմեն Գալջյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյան, խնդրեմ:

Գրիգոր Իսկանդարյան

-Պարոն Ավինյան, Դուք ասում եք, որ հարցերը ներկայացնենք աշխատանքային կարգով և կստանանք պատասխան: Դա, ենթադրում եմ, նաև հարցադրումները գրավոր ներկայացնելն է, որին Դուք պատասխանում եք 21 օրվա ընթացքում:

Ես հարցում եմ ուղարկել, որպեսզի ինձ տրամադրվի 2024թ. ընթացքում տրանսպորտի ոլորտում դրամական միջոցների հոսքերը (մուտքեր և ելքեր) ըստ բաղադրիչների՝ յուրաքանչյուր ամսվա դրությամբ, ինչպես նաև մեկ ուղևորափոխադրման համար Ձեր կողմից հայտարարված 144 դրամ արժեքը հիմնավորող հաշվարկը:

Ինձ պատասխանել են, որ տրանսպորտի ոլորտում, Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության համաձայն՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռքբերմանն ուղղվել է 7,000,000.0 հազար դրամ, «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը՝ 696,449.4 հազար դրամ, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը՝ 2,641,749.9 հազար դրամ:

Ինձ հետաքրքիր է, թե այստեղ որտե՞ղ է նշված 144 դրամի հիմնավորումը և մուտքերի ու ելքերի մասին պատասխանը: Ես ուզում եմ հասկանալ, ո՞րն է խնդիրը, որ լիարժեք չեն պատասխանում:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Պարոն Իսկանդարյան, ես պատասխանը տեսել եմ և Ձեզ ասել, որ ընդունում եմ՝ միգուցե ամբողջությամբ չի պատասխանվել և հորդորել եմ բաց թողնված մասով ևս մեկ հարցում ներկայացնել:

Ես առաջարկեցի նաև աշխատանքային կարգով քննարկում ունենալ այդ հարցի շուրջ, սակայն Դուք հրաժարվեցիք: Լրացուցիչ ճշգրտող հարցում ներկայացրեք և պատասխանը կտրամադրենք:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արշակ Սարգսյան, խնդրեմ:

Արշակ Սարգսյան

-Պարոն Ավինյան, կարծում եմ երեկ դիտել եք Հաղթանակ թաղամասի բնակիչների բողոքի ակցիան: Բնակիչներն արդարացի պահանջ էին ներկայացնում, որ Դուք շատ կարճ ժամանակում այցելեք Հաղթանակ թաղամաս և հանդիպեք բնակիչների հետ՝ իրենց բարձրաձայնած հարցերի շուրջ քննարկում ունենալու նպատակով: Քաղաքացիներն անդրադարձել են նաև «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանին:

Կարծում եմ Դուք պատրաստվո՞ւմ եք գնալ Հաղթանակ թաղամաս: Պարոն Ավինյան, պետք չէ քաղաքացիներին հանդիպել իրենց բակերում միայն քարոզարշավի ժամանակ: Ընտրություններից առաջ այցելել եք, իրենց ձայների համար, բայց ընտրություններից հետո չեք այցելում թաղամաս և չեք ուզում հանդիպում ունենալ և քննարկել խնդիրները: Դուք պարտավորություն ունեք քաղաքացիներին հանդիպել իրենց բակերում:

Քաղաքացիների պահանջն է, որ շատ կարճ ժամանակում հանդիպում ունենաք Հաղթանակ թաղամասի բնակիչների հետ՝ իրենց բակերում:

Տիգրան Ավինյան

-Պարոն Սարգսյան, ի գիտություն Ձեզ՝ 2022 թվականից Հաղթանակ թաղամասի բոլոր խնդրահարույց հարցերը մտել են գործնական փուլ և մինչ օրս ընդունվել է քաղաքապետի մոտավորապես 100 որոշում: Այսինքն՝ իմ նախաձեռնությամբ Հաղթանակ թաղամասում 100 ընտանիքի հարց լուծվել է: Թաղամասի բնակիչների հետ ես պարբերաբար հանդիպում եմ և՛ քաղաքապետարանում, և՛ Նոր տարվա ընթացքում, երբ այցելում եմ խնամքի կարիք ունեցող ծերերին (հաստատությունը գտնվում է Հաղթանակ թաղամասում):

Ամենայն հարգանքով, բայց Դուք ու Ձեր քաղաքական ուժը չէ, որ պետք է միջնորդ հանդիսանա իմ ու որևէ բակի բնակիչների միջև հանդիպումներ կազմակերպելու համար: Բնակիչների հարցերը լուծվում են քննարկումների արդյունքում:

Պարզաբանումներ կներկայացնի նաև Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը:

Արմեն Փամբուխչյան

-Նախորդ երեքշաբթի օրը ես հանդիպում եմ ունեցել իմ աշխատասենյակում, որտեղ ներկա են եղել նաև համապատասխան վարչությունների պետերը և Հաղթանակ թաղամասի բնակիչը, ով հանդես էր գալիս որպես ընդհանուր բնակչության ներկայացուցիչ:

Քննարկել ենք մի քանի հարցեր, ընդ որում՝ կոնկրետ առաջարկներ ենք ներկայացրել սանիտարական գոտու և գերեզմանատան հետագա ճակատագրի հետ կապված: Եղել է պայմանավորվածություն, որ 3-4 օր բնակիչները կքննարկեն, կորոշեն ընդունելի տարբերակը, այնուհետև կհանդիպենք կամ հեռախոսային զրույցով կհասկանանք, թե որ տարբերակն են նախընտրել:

Երեկվա կազմակերպված ակցիան անհասկանալի էր՝ այն առումով, քանի որ ներկայացուցիչը հանդես էր գալիս թաղամասի 3500 հոգու անունից և գնացել էր քննարկելու նրանց հետ:

Ինչպես քաղաքապետը նշեց մոտ 100 ընտանիքի հարց լուծվել է, դրանք այն հարցերն են, որոնք քաղաքապետարանը մեծ ջանքեր է գործադրել լուծելու համար: Թաղամասում կան որոշ խնդիրներ, որոնց մենք կասկածով ենք մոտենում և չկա իրավական հիմք: Մենք

ամբողջությամբ տիրապետում ենք իրավիճակին և բոլոր խնդիրներին մանրամասն ծանոթ ենք:

Արշակ Սարգսյան

-Երկրորդ հարցը հնչեցնեմ. այն, որ անդրադառնում եք գազելներին՝ մենք փողոցում մարդկանց ասում ենք, որ գազելների կողմնակից չենք: Եթե գծատերերը շահույթով էին աշխատում, չի կարող տրանսպորտն անցնի քաղաքապետարանի ենթակայության տակ ու շահույթ չլինի:

Ուռճացված ծախսեր եք ցույց տալիս, ուղևորահոսքի հաշվարկ իրականում այս պահին չեք կարող իրականացնել և ինքնարժեք ձևավորել: Վստահ ասում եմ, որ ներկայացված թիվն ինքնարժեքի իրական թիվը չէ: Այո՛, գազելները շատ վատն էին, բայց 100 տարի առաջ էլ կառքեր էին: Ինչու՞ այդ կառքերի մասին չեք խոսում: Խորհուրդ եմ տալիս կասեցնել այս որոշումը, քանի որ 100 դրամը բավարար գումար է, որ MAN ավտոբուսներ ունենանք: Մետրոպոլիտենում 75 մլրդ արժողությամբ վագոնի պակաս կա, եթե այդ վագոնները գնվի, ապա ինքնարժեքը 500 դրա՞մ է դառնալու կամ մետրոյի Աջափնյակ կայարանը երբ կառուցվի, դա էլ է ինքնարժեքի գնի մեջ ներառվելու, թե ոչ:

Տիգրան Ավինյան

-Պարոն Սարգսյան, կառքից չենք խոսում, քանի որ մենք կառք չենք փոխել: Մեր իշխանությունը վերջին շրջանում փոխել է գազելները, պազիկները, ծխացող հունդայիները, բոգդանները, որոնք վերջին 25-30 տարին երթևեկում էին Երևան քաղաքով: Այսօրվա իշխանության իրականացրած յուրաքանչյուր փոփոխություն ոչ թե արդարացումներ փնտրելու մասին է, այլ այդ փոփոխությունը կյանքի կոչելու մասին է:

Նորից եմ կրկնում՝ նոյեմբեր ամսին ստվեր չի եղել: Հնչեցված 10 մլն 700 հազար դրամը դա Jong Tong, MAN ավտոբուսների հաշվարկով է և հավելյալ այն նոր 9 գծերով, որոնք այսօր պետք է գործարկվեն: Ուղևորափոխադրման գումարն այդ տրամաբանությամբ է հաշվվել և Higer մակնիշի ավտոբուսների ուղևորափոխադրման գումարը չի հաշվարկվել:

Հաջորդ հարցը՝ «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյան, խնդրեմ:

Վահան Ավագյան

-Պարոն Ավինյան, Մոսկովյան հ.8 շենքի բնակիչ տիկին Մարիամին չի թույլատրվում շենքի ճակատային հատվածում տեղադրել լվացքի համար նախատեսված պարաններ: Խնդրում եմ այս հարցի կապակցությամբ պարզաբանում ներկայացնել:

Հաջորդ հարցը վերաբերում է Հերացու փողոցում գործող 2 բենզալցակայանին: Մի բենզալցակայանն ապամոնտաժվել է, իսկ մյուս բենալցակայանը տեղափոխվել է ինչ-որ շինության տարածք, սակայն պետք է այդ բենզալցակայանը չգործեր:

Խնդրում եմ պարզաբանել:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանը:

Պետրոս Պետոյան

-Պարոն քաղաքապետ, քաղաքացու կողմից ներկայացվել է բողոք և Մոսկովյան հ.8 շենքի բակում տեղադրված լվացքի համար նախատեսված պարաններն ապամոնտաժվել են: Լսել ենք նաև տիկին Մարիամի պարզաբանումը: Խնդիրը քննարկվել է պարոն Ավագյանի հետ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նոր փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո կարող ենք ապօրինի տեղադրված ծածկերն ապամոնտաժել և տիկնոջ կողմից բարձրաձայնած խնդիրները լուծել:

Տիգրան Ավինյան

-Խնդրում եմ այդ բակի վերաբերյալ հաջորդիվ ներկայացնել տեղեկատվություն:

Այսինքն կնոջ բողոքն ի՞նչն է: Ենթադրարաբար, այդ կնոջ կողմից բարձրաձայնված խնդիրներից բացի, մյուս բնակիչներն էլ նրա նկատմամբ են բողոք արտահայտում:

Հարցը հետևյալն էր, որ կնոջ կողմից բարձրաձայնած խնդիրները գործող օրենսդրության շրջանակներում պետք է լուծել:

Երկրորդ հարցը վերաբերում էր Հերացի փողոցում գործող բենզալցակայանին: Երևանի քաղաքապետարանը քանդել է այդ փողոցում գործող մեկ բենզալցակայան, որն իր գործունեությունը շարունակել է իրականացնել մեկ այլ շենքի տարածքում: Այն հանդիսանում է իրենց սեփական տարածքը:

Անհրաժեշտ է, որպեսզի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչությունն ու հասարակական կարգի պահպանության ծառայությունը համատեղ կազմակերպեն քննարկում և ներկայացնեն առաջարկություն: Կարծում եմ անհրաժեշտ է նաև ուսումնասիրել տեսչական մարմնի կողմից ներկայացված դիրքորոշումը:

Պարոն Ավագյանը ճիշտ է, այդ բենզալցակայանը գործունեություն իրականացնելու թույլտվություն չպետք է ունենա: Սակայն նրանք հաշվի են առել, որ տվյալ շենքի տարածքը համարվում է իրենց սեփականությունը և այդտեղ շարունակել են իրենց գործունեությունը:

Առավել մանրամասն տեղեկատվություն կներակայացնի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

-Հերացի փողոցի աջ հատվածում, շինության տարածքում տեղադրված է լիցքավորման սարքավորումը և թույլտվություն առկա չէ: Տեսչական մարմնի գործընկերների հետ հարցը մեկ անգամ ևս կքննարկվի՝ լուծում գտնելու համար:

Տիգրան Ավինյան

-Պարոն Մարգարյան, կսպասեմ Ձեր արձագանքին:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմենակ Դանիելյան, խնդրեմ:

Արմենակ Դանիելյան

-Պարոն Ավինյան, քիչ առաջ հարցնում էիք՝ «Մայր Հայաստան» խմբակցությունն է ներկայացնում այսուհետ Հաղթանակ թաղամասի բնակիչներին: Այո՛, իսկ ինչու ոչ՝ «Մայր Հայաստան» խմբակցությունը ներկայացնում է թե՛ Հաղթանակ թաղամասի բնակիչներին, թե՛ Սիլիկյան թաղամասի բնակիչներին և ընդհանրապես Երևան քաղաքի բնակիչներին, որովհետև մենք առաջնային մանդատով ընտրված քաղաքային խորհրդարանի ներկայացուցիչներն ենք ու ներկայացնում ենք բոլոր երևանցիների շահերը և իրավունք ունենք բարձաձայնված հարցերն այստեղ հնչեցնել:

Նիստի սկզբում ես մի հարց բարձրացրեցի, որի պատասխանը մինչև այժմ չլսեցի. ի՞նչ թիվ է հիմք ընդունվել քաղաքային տրանսպորտի բյուջեն հաշվարկելիս, խոսքը վերաբերում է 21 մլրդ 300 միլիոնի մասին:

Երբ խոսում ենք ստվերից, կոնկրետ ասեմ, որ ստվեր է եղել, երբ կանխիկ շրջանառություն է եղել ավտոբուսներում և այժմ էլ կա: Դա արդեն իրավապահների հարցն է, որ քննեն, տեսնեն որտեղ է այդ ստվերը: Մենք որոշակի կասկածներ ունենք և դրա մասին բարձրաձայնել ենք: Ոչ մի պատասխանատու անձ (խոսքս չի վերաբերվում վարորդներին) պատասխանատվության չի ենթարկվել: Ինչքա՞ն է շարունակվելու, ե՞րբ ենք տեսնելու այդ ստվերի համար պատասխանատու մարդկանց իրավապահ մարմինների կամ դատարանի առաջ կանգնած:

Դուք որոշել եք, որ տրոյլեյբուսը 50 դրամից պետք է դառնա 150 դրամ: Սա 50 տոկոս չէ, սա երեք անգամ թանկացում է: Ինչպե՞ս եք որոշել, որ տրոյլեյբուսը երեք անգամ պետք է թանկանա, դիզելային վառելի՞քն է թանկացել, թե գա՞զ է շատ ծախսում տրոլեյբուսը: Ի՞նչ տրամաբանությամբ է տրոլեյբուսը թանկացել:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Հանձնաժողովի նիստի ժամանակ, ես ասում էի, որ անկախ բովանդակությունից նաև ձևն է կարևոր: Այժմ Դուք մտածում եք, որ պետք է այդպիսի հեգնական հարցեր հնչեցնեք ու բոլոր հարցերին մենք ճշգրիտ պատասխանենք: Կարելի՞ է ի վերջո նորմալ քաղաքակիրթ շփման միջավայր հաստատել, թե ոչ:

Գազելների վերաբերյալ, ասեմ, որ գազելներից Դուք եք խոսում՝ ասելով, որ զրուցել եք և գիտեք՝ օգուտով են աշխատել: Հարցրեք այդ վարորդներին, թե ինչու՞ չեն կարողանում «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ում աշխատանքի ընդունվել: Դա նրանից է, որ հարկերից խուսափելու նպատակով՝ որպես աշխատող չեն գրանցվել և վարորդական ստաժ չունեն:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան, խնդրեմ:

Հայկ Գրիգորյան

-Պարոն Ավինյան, հարցս Վարդաշենի 6-րդ փողոցի հ.68Ա և հ.66/1 շենքերի վերաբերյալ է: Նշված հասցեների բնակիչներին նախընտրական շրջանում խոստացել եք 1,5 տարվա ընթացքում իրենց տեղափոխել 4-րդ կարգի վթարային շենքերից:

Մեր խմբակցության անդամները երկու օր առաջ իրենց հետ հանդիպել են և մենք տեսել ենք իրենց տնային պայմանները: Նշեմ, նաև որ արդեն այդ 1,5 տարին լրացել է և բնակիչները շատ վրդովված էին, որ այս ընթացքում Երևանի քաղաքապետարանի կողմից որևէ մեկն իրենց չի այցելել: Նշեմ նաև, որ նշված հասցեներից մեկ շենքում մոտավորապես 80 բնակարան կա: Այս հարցի հետ կապված ցանկանում եմ նաև լուծում առաջարկել, քանի որ հասկանում եմ, որ այդ մարդկանց պետք է բնակարանով ապահովել:

Ես միշտ անդրադառնում եմ «ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ի օրինակին: Ես իրականացրել եմ հարցում և պարզվեց, որ 2024թ. ընթացքում «ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ն շինարարության ոլորտում կատարել է 6-7 խախտում և տուգանվել է մոտ 6-7մլն. դրամով: Այստեղ նախ անհասկանալի է, ո՞րն է Երևանի քաղաքապետարանի քաղաքականությունը. Թույլ է տալիս կառուցապատողներն անընդհատ խախտումներ անեն ու դրա դիմաց վճարեն: Այս դեպքում «ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ի կողմից կոնկրետ կատարվում է խախտումներ, որի դիմաց ստանում է 100 մլն. դրամի օգուտ, բայց տուգանվում է 6-7 մլն դրամով: Այսինքն՝ ընկերությանը տնտեսապես օգուտ է լինում անսահմանափակ քանակով տուգանվելը:

Ի՞նչն է խանգարում, որ Երևանի քաղաքապետարանը, բազմաբնակարան շենքերի շինթույլտվությունները տրամադրելիս, առաջադրի պայման, որ եթե տվյալ կառուցապատողն օրինակ տարվա 12 ամսվա ընթացքում 5 անգամից ավել շինարարական նորմերի խախտում է իրականացրել, Երևանի քաղաքապետարանը կարողանա տվյալ կառուցապատողի կառուցապատման ֆոնդի 3-5%-ը՝ մատչելի, ինքնարժեքի գնով և նույնիսկ անվճար, առաջարկի Երևանում գոյություն ունեցող այսպիսի խնդրահարույց հանրակացարանների բնակիչներին: Այդ ֆոնդը բաշխելով լուծվում է 2 հարց՝ մեկը կարգապահ շինարարություն իրականացնողների հարցը, մյուսը լուծվելու է բնակարանային ֆոնդի հարցը, որը կարծում եմ մեծ ֆոնդ չէ: Այդ շենքերը քաղաքապետարանի կողմից հաստատ գույքագրված կլինեն և, իհարկե, այս հարցը մեկ տարում չի լուծվելու, բայց գոնե կսահմանվի խնդիր՝ հարցը լուծել 3-4 տարում, հետևաբար հարցը կլուծվի:

Այժմ հարցս հետևյալն է՝ արդյոք նախատեսում եք այց կատարել Վարդաշենի հանրակացարաններ: Ես հորդորում եմ, որ անպայման այց իրականացվի և կխնդրեի, որ

այդ այցի մասին Երևանի ավագանու անդամներին էլ տեղյակ պահեք, ես էլ անձամբ կցանկանայի Ձեզ հետ գալ:

«ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ի վերաբերյալ՝ առաջարկում եմ վերանայել տուգանվելու ու խախտումները շարունակելու քաղաքականությունը:

Հաջորդ հարցը վերաբերում է Երևան քաղաքի օդի աղտոտվածությանը, կցանկանայի իմանալ օդի աղտոտվածության մասով այս տարվա համար կոնկրետ ի՞նչ քայլեր են իրականացվում:

Ցանկանում եմ անդրադառնալ նաև Աջափնյակ վարչական շրջանում առկա ապօրինի կրպակներին: Այս մասով ես հարցում էի իրականացրել՝ ինձ պատասխանել էին, որ ներկայումս ընթանում է ճարտարապետական դիմագիծը և գեղագիտական տեսքը վերանայելու, տաղավարները տեղափոխելու և հաշվառելու գործընթաց: Ցանկանում եմ հասկանալ, սա ինչ-որ իրավակա՞ն գործընթաց է: Ի՞նչ գործընթաց է տեղի ունենում վարչական շրջաններում կամ Երևան համայնքում կրպակների մասով:

Ես բազում կրպակների վերաբերյալ դիմել եմ և որևէ մեկը լուծում չի ստացել: Սա վստահաբար չի պահաջում գլխավոր հատակագծի առկայություն, որ այդ հիմքով պատճառաբանենք: Ապօրինի կրպակներ են, որոնք ենթադրաբար տեղադրված են համայնքային հողի վրա: Ցանկանում էի իմանալ այս մասով ի՞նչ քաղաքականություն է իրականացվում, այս տարվա ընթացքում այդ ապօրինի կրպակներից ազատվելու գործընթաց լինելու՞ է:

Տիգրան Ավինյան

-Պարոն Գրիգորյան, կրպակների հետ կապված մեր դիրքորոշումն այն է, որ բոլոր ապօրինի տեղադրված կրպակները պետք է ապամոնտաժվեն համայնքային հողերից: Այս հարցը խորապես ուսումնասիրելու համար խնդրում եմ ինձ տրամադրեք Ձեր հարցման պատասխանը:

Ինչ վերաբերում է Վարդաշեն թաղամասի հարցին, ապա նշեմ, որ ես 2 անգամ այցելել եմ նշված հասցեներ և այնտեղ ունենք մոտ 190 բնակարան և 2 չորրորդ կարգի վթարային շենք:

Այո՛, ես այս թաղամասի բնակիչներին խոստացել եմ, որ 1,5 տարվա ընթացքում պետք է փորձեմ ՀՀ Կառավարության հետ համատեղ լուծել այս հարցը: Իրականում այն, ինչ Երևանի քաղաքապետարանի գործառույթների շրջանակներում հնարավոր է եղել լուծել՝ լուծվել է: Մասնավորապես, Արզումանյան փողոցի վթարային շենքերում մոտավորապես 60 ընտանիքի բնակարաններ ենք հատկացրել կամ բնակարանի գնման վկայականներ և դա արել ենք Երևանի քաղաքապետարանի միջոցներով:

Պարոն Փամբուխչյան, եթե մենք այսպես շարունակաբար կրկին չկարողանանաք մեր գործընկերների հետ գտնել այս հարցի լուծումը, մեր կողմից տրված խոստումը ժամանակի ընթացքում բաշխելով, Երևանի քաղաքապետարանի միջոցներով պետք է լուծենք, որովհետև ես համաձայն եմ՝ երևանցիների անվտանգության հարցը մեզ համար

առաջնային է: Ես անպայմանորեն այցելելու եմ Վարդաշենի նշված հասցեների շենքեր և Ձեզ էլ անպայման տեղյակ կպահենք այդ մասին:

Ինչ վերաբերում է կառուցապատողների կողմից խախտումներ իրականացնելու և տուգանվելու հարցին, տեղեկացնեմ, որ բացի նրանից, որ կառուցապատողները տուգանվում են՝ ինչ-որ քանակի տուգանքից հետո, այդ գործերն ուղարկվում են ՀՀ գլխավոր դատախազություն, որտեղ ակնհայտ չարաշահման դեպքերով գործեր են հարուցվում: Այսինքն՝ դրա հետևանքը միայն ֆինանսական չէ, սա կարող է ունենալ նաև քրեական հետևանք:

Այս մասով նաև ավելացնեմ, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի փոփոխությունների նոր նախագծով էականորեն ավելի խստացված են տուգանքների չափերն ու չափորոշիչները:

Ինչ վերաբերում է օդի որակի չափման ծրագրին՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության կողմից առաջարկվել է քառամյա ծրագիր, որին Դուք էլ կարող եք ծանոթանալ: Այստեղ հարցը վերաբերում է այն հատվածին, որը հիմնականում պայմանավորված է մարդածին գործոններով և կան նաև համընդհանուր լուծումներ, որոնք վերաբերում են արդեն մշտադալար ծառերի տնկմանը:

Հարգելի գործընկերներ, այս մասով ցանկանում եմ նաև տեղեկացնել, որ վերջին 3 տարվա ընթացքում մոտավորապես 50 հա կանաչ տարածք ենք ստեղծել, բայց այժմ նոր ենք սկսում իրականացնել մշտադալար ծառերի տնկիների փոփոխություն՝ պայմանավորված նաև օդի որակի հետ կապված մտահոգություններով, որոնք մենք ունենք:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Ռոբերտ Ծովյան, խնդրեմ:

Ռոբերտ Ծովյան

-Վերջերս վատ լուր իմացա այն մասին, որ կան մարդիկ, ովքեր փորձում են տիրանալ համայնքային հողին՝ դատարանի օգնությամբ: Ուզում եմ իմանալ, թե քաղաքապետարանն ի՞նչ միջոցներ է ձեռնարկում այդ ուղղությամբ և անցյալ տարի քանի՞ դատական գործընթաց է կայացել այս ուղղությամբ:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

-Եթե խոսքը վերաբերում է դատարկ հողերին, ապա 10-ից պակաս է եղել: Եթե խոսքը վերաբերում է ինքնակամ շինություններով ծանրաբեռնված՝ ինքնակամ շինության օրինականացման արդյունքում հողամասերի վաճառքին, ապա շատ են եղել:

Ես խնդրում եմ առանձին ինձ տեղեկացրեք, թե ինչ գործի մասին է խոսքը, քննարկենք և ավելի հետևողական լինենք, քանի որ խոսքը գնում է համայնքային հողի մասին:

Ռոբերտ Ծովյան

-Երկրորդ հարցը հնչեցնեմ. տեսնում ենք բազմաթիվ մարդկանց, ովքեր տուն են կառուցել կամ բազմաբնակարան շենքում տուն են գնել և ինչ-ինչ պատճառներով այդ շենքը չի ստացել ավարտական ակտ: Արդյունքում բազմաթիվ խնդիրների են հանդիպում և, ամենակարևորը, չեն վճարում գույքահարկ:

Ուզում եմ հասկանալ այս մասով քաղաքապետարանն ի՞նչ միջոցներ է ձեռնարկում և ինչպե՞ս կարող է անել այնպես, որ այդ հարցերը հնարավորինս շուտ լուծվի, չհասնի դատարան ու այդպես տասնյակ տարիներով չձգձգվի:

Տիգրան Ավինյան

-Խոսքը վերաբերում է արդեն մի քանի տարի գործող տներին ու շենքերին: Այդտեղ քաղաքապետարանը գնում է մաքսիմալ լուծումների ճանապարհով: Այսինքն, երբ առաջարկվում է նախագծի վերահամաձայնեցում կամ որևէ այլ առաջարկ է արվում կառուցապատողի կամ տան տիրոջ կողմից, որ օրենքի շրջանակներում քաղաքապետարանը կարող է ընդունել այդ առաջարկությունը, մենք պատրաստ ենք քննարկելու:

Մենք հակված ենք տարիների կուտակված այդ հարցերը լուծելու, որովհետև դա պետք է քաղաքապետարանին, քանի որ դրանից գոյանում է գույքահարկ, նաև տանտիրոջն է պետք, որովհետև ինքը օրինական փաստաթղթեր չունի:

Հիմնականում այդ տեսակ խնդիրներն առաջանում են այն պատճառով, որ այդ տների ու շենքերի հետ կապված լինում են նախագծային էական շեղումներ, բայց եթե խոսքը վերաբերում է հողամասի սահմաններում շեղումներին և ոչ թե հրդեհային անվտանգությանը վերաբերող շեղումներին, ապա քաղաքապետարանը պատրաստ է քննարկել: Քաղաքապետարանը փորձում է լուծումներ գտնել եղած նորմերի և տրամաբանության շրջանակներում:

Մենք բազմաթիվ քննարկումներ ենք ունեցել և եթե կան հստակ դեպքեր, դրանց մասին տեղեկացրեք քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Շավարշ Գրիգորյանին:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյան, խնդրեմ:

Մանուկ Սուքիասյան

- Երևանի ավագանու նախորդ նիստի ընթացքում հարց էի բարձրացրել Վարդավառի այգու վերաբերյալ:

Ինձ դիմել են քաղաքացիներ, որոնք հարցեր են բարձրացրել Հաղթանակ զբոսայգու և Բուսաբանական այգու վերաբերյալ.

Հաղթանակ զբոսայգին գտնվում է անմխիթար վիճակում, իսկ Բուսաբանական այգում՝ ի հաշիվ ծառերի ֆոնդի, տեղի է ունենում մասշտաբային շինարարություն:

Խնդրում եմ տեղեկացրեք, թե ի՞նչ է կատարվում: Այդ այգիների վերաբերյալ ներկայացրեք տեղեկատվություն:

Տիգրան Ավինյան

-Պարոն Սուքիասյան, Հաղթանակ զբոսայգու վերաբերյալ Երևանի քաղաքապետի խորհրդական Սոնա Թևանյանին տրվել է հանձնարարական՝ նախապատրաստել մրցույթ: Հաղթանակ զբոսայգում վարձակալությամբ տրված պայմանագրերի ժամկետներն ավարտվում են այս տարի: Ցանկանում ենք խոշոր ընկերություններից, որոնք ի վիճակի են Հաղթանակի զբոսայգին դարձնել քաղաքային զբոսայգի, ստանալ նոր կոնցեպտուալ առաջարկներ և զբուսայգում ներկայումս առկա տարատեսակ և տարաբնույթ միջավայրը վերացնել: Այս տարի այդ մրցույթը կկայանա:

Երևանի քաղաքապետարանի ծրագրով իրականացվում է Բուսաբանական այգու հսկայական հատվածի բարեկարգման աշխատանքներ: Իրականացվում է «Կյանքի պուրակ»-ի ստեղծման ծրագիրը և շինարարական ծրագրի ամբողջական ավարտը նախատեսված է 2026 թվականին: Պարբերաբար կատարվում են շրջայցեր և տեղում հետևում ենք աշխատանքների ընթացքին:

Տասնամյակներ շարունակ տարատեսակ լքված այգիներում այժմ ունենք էական փոփոխություններ, օրինակ՝ Մերգելյանի այգում, Հայրենական պատերազմի հաղթանակի 40-ամյակին նվիրված զբոսայգու հատվածում: Դավթաշենի 1-ին և 2-րդ թաղամասերում գտնվող այգում գարնանը շատրվանները կաշխատեն: Շուտով ծառատունկ կիրականացնենք Նոր Նորքի 5-րդ զանգվածից դեպի Դավիթ Բեկի փողոցի հատվածում կառուցված կասկադում: Կարծում եմ վերջին 2-3 տարվա ընթացքում, այս առումով, մեծ ծավալի աշխատանք է արվել: Երևանի քաղաքապետարանի ծրագրով Բուսաբանական այգում իրականացվում են այգու բարեկարգման աշխատանքներ, կառուցվում են ճեմուղիներ, մայթեր և նստարաններ, կանաչապատվում և ոռոգման ցանց է կառուցվում: Բուսաբանական այգում շենքի շինարարություն չի իրականացվում:

Առավել մանրամասն տեղեկատվություն կներկայացնի «Երևաննախագիծ» ՓԲ ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Սեդոյանը:

Անդրանիկ Սեդոյան

-Բուսաբանական այգում իրականացվող շինարարական աշխատանքների վերաբերյալ կարող եմ նշել, որ որոշակի հատվածում բացառապես կառուցվում է լիճ, որը կարող է ընկալվել որպես շինարարական մակերես: Այն իր ֆունկցիայով շատ օգտակար է լինելու այգու «առողջացման» համար: Կայանատեղիում առկա է ասֆալտապատ հատված, որն այգու վերակառուցման և «առողջացման» շրջանակում համարվում է սպասասրահի հատված, որտեղ այցելուները մուտք են գործելու: Որևէ այլ շինություն Բուսաբանական այգում չի կառուցվում:

Մանուկ Սուքիասյան

-Երևանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ ավտոբուսների վերջնականգառներում վարորդների համար բիոզուգարաններ տեղադրելու վերաբերյալ զեկուցվել է, որ մեկ բիոզուգարան նետել են ձորը:

Ցանկանում եմ տեղեկանալ բիոզուգարանը ձորից դու՞րս է բերվել, թե տեղադրվելու է նոր բիոզուգարան:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը:

Վազգեն Հարությունյան

-Միջադեպի հետ կապված հաղորդում է ներկայացվել և պլանավորվել է տեղադրել նոր բիոզուգարան:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գևորգ Ստեփանյան, խնդրեմ:

Գևորգ Ստեփանյան

- Տրանսպորտի ուղեվարձի թանկացման դեմ բողոքում են քաղաքացիների 60%-ը և ավելին: Մարդիկ բոյկոտում են և չեն վճարում տրանսպորտի ուղեվարձը:

Երևանի քաղաքապետարանում ավագանու անդամն այսօր հարզազրույց է ներկայացրել զանգվածային լրատվության միջոցին և ասել է, որ բոյկոտին մասնակցող քաղաքացիները «ներդրված» մարդիկ են:

Ուզում եմ լսել Ձեր հստակ դիրքորոշումը՝ կիսու՞մ եք ավագանու անդամի կարծիքը, որ հայրենակիցները «հպարտ ներդրված» քաղաքացիներ են, թե՞ ավագանին հայտնել է իր սուբյեկտիվ կարծիքը:

Տիգրան Ավինյան

-Պարոն Ստեփանյան, ավագանու անդամի կարծիքը չեմ լսել:

Ինչ վերաբերում է, որ քաղաքացիների 60%-ը և ավելին բոյկոտում են տրանսպորտի ուղեվարձի թանկացման դեմ, ցանկանում եմ նշել, որ ներկայացված տվյալը չափազանցված չէ, այլ ֆանտաստիկայի ժանրից է: Իրականությունը բացարձակապես այնպիսին չէ, ինչպես Դուք ներկայացնում եք: Քաղաքացիներն իրենց տարբեր դիրքորոշումները կարող են տարբեր ձևով արտահայտել:

Կարծում եմ, որ երևանցիներին կարողացել ենք ներկայացնել տրանսպորտի ոլորտում իրականացվող աշխատանքները և թե ինչի համար է իրականացվում այս փոփոխությունները:

Պարոն Ստեփանյան, այն մարդիկ, ովքեր հավելյալ 50 դրամ պետք է վճարեն, մասնավորապես՝ վճարում են զոհված զինծառայողների ընտանիքների անդամների,

հաշմանդամության 1-ին և 2-րդ կարգ, չորս և ավելի երեխա ունեցողների, ծնողազուրկ աշակերտների և ուսանողների համար: Մնացածն արդեն Ձեր դատողություններ են:

Պարոն Ստեփանյան, երբ հարց եք տալիս մարդու կողմից արտահայտած կարծիքի վերաբերյալ դիրքորոշում ստանալու համար և հարցին պատասխանողն այդ ամենին ծանոթ չէ, ուղղակի կարող եմ ասել, որ տեղյակ չեմ ինչի մասին է խոսքը: Հետևապես, որևէ կարգի արձագանք չեմ կարող ունենալ մի նյութի վերաբերյալ, որին ծանոթ չեմ:

Խնդրեմ ներկայացրեք երկրորդ հարցը:

Գևորգ Ստեփանյան

-Հազարավոր քաղաքացիներ ասում են, որ թանկացել է ոչ միայն տրանսպորտի ուղեվարձը, այլև գույքահարկը և աղբահանության վճարը:

Ներկայացնում եմ քաղաքացիների կողմից բարձրացված հարցը՝ պարոն Ավինյան, չե՞ք կարծում, որ 9% ձայն ստանալու պարագայում, մեկ տարի հետո ձախողել եք Երևան քաղաքի կառավարումը: Դուք ասել եք, որ պատրաստ եք անցկացնել արտահերթ ընտրություններ: Ի՞նչ կարծիք ունեք այս հարցի վերաբերյալ:

Տիգրան Ավինյան

-Կարծում եմ, որ արտահերթ ընտրություններ անցկացնելու դեպքում Դուք չեք ընտրվի:

Երևան քաղաքում ձախողված քաղաքային ծրագրերի վերաբերյալ, կարող եմ ասել հետևյալը.

Քանի որ կատարված աշխատանքների վերաբերյալ մենք շատ չենք խոսում, ապա Ձեր կողմից ներկայացված հակաքարոզչությունը ենթադրում է, որ Դուք երևի ճիշտ եք ասում:

2025 թվականի հունվար ամսին երաժշտական դպրոցներում, սպորտդպրոցներում, գեղագիտական և մշակութային կենտրոններում աշխատավարձերը 30%-ով բարձրացել են: Վերջին անգամ աշխատավարձերի բարձրացում կատարվել էր 2012 թվականին: Նախորդ տարի բարձրացել է մանկապարտեզների աշխատակիցների աշխատավարձը: Երկու տարի առաջ բարձրացել է վարորդների աշխատավարձը, իսկ 2025 թվականից վարորդներին վճարում ենք նաև արտաժամյա աշխատանքի համար:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպություններում աշխատում է շուրջ 30000 քաղաքացի և մենք մեծ հոգատարությամբ ենք վերաբերվում այդ մարդկանց: Բոլոր փոփոխություններն իրականացվում են երևանցիների համար և երևանցիների շահը հաշվի առնելով:

Մնացած 60% և 65 դրամի վերաբերյալ դատողությունները թողնում եմ մարդկանց դատողությանը:

Դուք իրավունք ունեք ասելու ինչ ցանկանում եք և մարդիկ կդատեն և՛ Ձեզ, և՛ մեզ:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սամվել Հակոբյան, խնդրեմ:

Սամվել Հակոբյան

-Պարոն Ավինյան, «ԱՆԻՖ» ընկերության վերաբերյալ Ձեր քաղաքական ղեկավարն ուղիղ գնահատական է տվել, խնդրում եմ լսենք ձայնագրությունը, որից հետո հնչեցնեմ հարցը:

Ուզում եմ իմանալ համաձա՞յն եք Ձեր ղեկավարի կարծիքի հետ:

Տիգրան Ավինյան

-Պարոն Հակոբյան, «ԱՆԻՖ» ընկերությանն անդրադառնալու բազմաթիվ առիթներ են եղել: Եթե հաշվի առնենք, որ այնուամենայնիվ դադարեցված է այդ ծրագրի գործունեությունը, ապա իհարկե դա ձախողում է և պետք է հասկանալ ձախողման պատճառները, որովհետև նմանատիպ խոշոր փոփոխությունները, ինչպիսին փորձում էր իրականացնել «ԱՆԻՖ»-ը, պայմանավորված էր տարատեսակ քննարկումներով, ընդդիմության և ոչ ընդդիմության մանիպուլյացիաներով և այո՛, իհարկե, պետք է հասկանալ ովքեր են մեղավոր, որ նախանշված որոշ ծրագրեր չեն իրականացվել: Պետք է քննվի և պարզվեն մեղավորները: Ես միանշանակ համաձայն եմ դրա հետ:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Իոսիֆ Կուբատյան, խնդրեմ:

Իոսիֆ Կուբատյան

-Պարոն Ավինյան, հարցս վերաբերում է 40 մլրդ դրամին: Դա այն թիվն է, որով կիրականանա վարչապետի և մեր բոլորիս ցանկությունը, որ 5 կամ 15 տարի հետո մենք չվերադառնանք գազելներին: Այդ 40 մլրդն այն թիվն է, որ մոտավորապես անհրաժեշտ է 250 հատ 18 մետրանոց ավտոբուս գնելու համար: Այդ ավտոբուսներն էլ իրենց հերթին անհրաժեշտ են, որ եղած շարժակազմը երկու անգամ շուտ չմաշվի և մենք կրկին չվերադառնանք գազելներին: Այս տարվա ո՛չ պետական բյուջեում, ո՛չ համայնքային բյուջեում դրա համար գումար նախատեսված չէ ու 2022 թվականից այդ գումարը չի գտնվում:

Ուզում եմ իմանալ ի՞նչ տեղեկատվություն կա այդ 250 ավտոբուսի ձեռքբերման աշխատանքների ընթացքի մասին:

Տիգրան Ավինյան

-Պարոն Կուբատյան, ես իրականում մի փոքր տարակուսում եմ Ձեր հարցից: Այս հարցը չպետք է բարձրաձայնվեր Ձեր կողմից, որովհետև Ձեր խմբակցությունը փաստացի առաջարկում է մարդկանց չվճարել տրանսպորտի ուղեվարձ: Ինչ-որ մի տեղից պետք է գոյանա գումար, որ մենք շարունակենք այդ ռեֆորմն իրականացնել: Գիտեք, որ այս հարցն առկա է և գիտենք, որ փոփոխություններ և հավելյալ հավաքագրում է պետք, միգուցե 35 մլրդ դրամ գումար է մեզ պետք հավելյալ 25 ավտոբուս ձեռք բերելու և 2 դեպո կառուցելու համար: Այսինքն, Դուք այս ամենի էությունը հասկանում եք, սակայն ինձ տալիս եք այդ հարցը: Գումարը չկա, որովհետև այս պահի դրությամբ դեռևս մենք հասկացել ենք, որ ռեֆորմների տեմպը պետք է մի փոքր դանդաղեցնենք և համարժեք դարձնենք

հավաքագրմանը: Եթե հավաքագրում ենք ավելի քիչ, քան պլանավորել էինք նախորդ տարի մարտին, հետևապես մեր իրականացվող ծրագրերի տեմպը սկսում է դանդաղել:

Իոսիֆ Կուբատյան

-Երկրորդ հարցը հնչեցնեմ. երևի իշխանական մեր գործընկերները չհիշեն, բայց 2021թ. իրենց քաղաքական ուժի մի մասն է մասնակցել տրանսպորտի բոյկոտին: Բոյկոտում էին Երևանի ավագանու այն նիստը, որտեղ պետք է գումար հատկացվեր Jong Tong ավտոբուսների գնման համար: Լուրեր էին շրջանառվում, որ այդ բոյկոտի հետևում կանգնած էիք Դուք, պարոն Ավինյան: Այժմ, որպեսզի այդ թեման մեկընդմիշտ փակենք, կասե՞ք Դուք այդ բոյկոտի մասին տեղյա՞կ էիք և արդյոք ինչ-որ գործողություններ կատարե՞լ եք:

Տիգրան Ավինյան

-Պարոն Կուբատյան, յուրաքանչյուր գործողություն, այդ թվում քաղաքական որևէ ակցիան ևս, պետք է ունենա տրամաբանություն:

Երբ խոսքը վերաբերում է քաղաքային տրանսպորտի ապագան կանխորոշող գնում իրականացնելուն, ավագանու մեր գործընկերներն ինձ հարց են ուղղել քննարկմանը նախորդող օրը, որովհետև փոխվարչապետի մոտ տեղի էր ունեցել տրանսպորտի վերաբերյալ քննարկում՝ այդ ժամանակվա քաղաքապետ Հայկ Մարությանի, ֆինանսների նախարար պարոն Ջանջուղազյանի մասնակցությամբ:

Քաղաքապետին ասվել է, որ պատրաստվի համապատասխան պահանջ-փաստաթուղթ՝ հիմքում դնելով եվրոպական բարձր որակի ավտոբուսների ձեռքբերումը և ՀՀ կառավարությունը պատրաստ է ֆինանսավորել այդ ծրագիրը: Դրանից հետո, երբ ավագանու անդամներն ասացին, որ ուզում են չինական ավտոբուսներ գնել 8.5 մետրանոց, ես տեղեկացրեցի, որ մեզ մոտ նման հարց է քննարկվել և կառավարությունը ներկայացրել է իր դիրքորոշումը: Այսինքն՝ իմ մասնակցությունը եղել է միայն այս տեղեկատվությունը փոխանցելը, այս հարցի առումով ՀՀ կառավարության կայացրած որոշման մասին:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Կիմա Աբրահամյան, խնդրեմ:

Կիմա Աբրահամյան

-Հարցս վերաբերում է հանրային սննդի սեզոնային արտոնություններին, տերասանների տեղադրման թույլտվությանը:

Գործող կարգի համաձայն, առանձնացվում է երկու շրջան՝ վեց ամիս ձմեռային սեզոն և վեց ամիս ամառային սեզոն: Ամառային շրջանն սկսվում է ապրիլ ամսից: Մարտի 1-ից հաճախորդները խնդրում են սրճարաններում բացօթյա սպասարկում իրականացնել, սեղանները և աթոռները տեղադրել դրսում:

Հանրային սննդի կազմակերպիչները կանգնում են հետևյալ հարցի առաջ՝ կամ պետք է դիմեն վեց ամսվա ձմեռային սեզոնի թույլտվություն ստանալու համար, որը թանկ է, կամ պետք է օրենքը խախտեն և ենթարկվեն տույժի:

Այս հարցը բազմիցս քննարկվել է, ցանկանում եմ իմանալ ի՞նչ լուծում է առաջարկվել:

Տիգրան Ավինյան

-Տիկին Աբրահամյան, եթե օրենսդրական փոփոխություն չի ենթադրում, կարո՞ղ եք ավագանու որոշման նախաձեռնությամբ հանդես գալ:

Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Պարոն քաղաքապետ, օրենսդրական փոփոխություն ենթադրում է, քանի որ սեզոնների բաժանումը սահմանված է օրենքով: Աշխատանքային կարգով քննարկման արդյունքում մշակվել է նախագիծ և միգուցե այդ գործընթացը կարելի է վերսկսել: Բովանդակային առումով խնդիր չեմ տեսնում:

Տիգրան Ավինյան

-Եթե քաղաքական տարաձայնություն չկա, ապա կարող ենք գնալ լուծման ճանապարհով: Հարցը համատեղ քննարկեք և այդ նախագծին ընթացք տանք:

Քննարկեք նաև թե հանրային սննդի ներկայացուցիչներն այս տարի ի՞նչ կարող են անել:

Կիմա Աբրահամյան

-Երկրորդ հարցը վերաբերում է Էրեբունի վարչական շրջանում գտնվող Աղի լճին: Անցյալ տարի լիճ կեղտաջրեր էին լցվել ու հանգստյան գոտին չէր ծառայում իր նպատակին: Քննարկումներ են եղել և՛ լճի մաքրման, և՛ մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցելու հետ կապված՝ այդ հատվածը հանրային հանգստի գոտի դարձնելու համար:

Ի՞նչ քայլեր են ձեռնարկվել այս ուղղությամբ:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Հակոբ Բալայանը:

Հակոբ Բալայան

-Սարի թաղի հատվածում կոյուղի էր վնասվել և անցյալ տարի վթարը վերացվել է: Այս տարի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից ներկայացվել է նախագիծ, տարածքը կբարեկագվի և կանցկացվի արտաքին լուսավորություն: Անցյալ տարի իրականացվել էր ասֆալտապատման աշխատանքներ և տեղադրվել էր նստարաններ, իսկ այս տարի առավել ծավալուն նախագիծ ներկայացվել է շինարարության և բարեկարգման վարչության կողմից:

Տիգրան Ավինյան

-Հարցի վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն կներկայացնի Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Լևոն Հովհաննիսյան

-Նշված հարցը շատ կարևոր է և բազմաթիվ քաղաքացիների կողմից այս հարցը բարձրացվել է:

Երևանի ավագանու կողմից Երևանի 2025 թվականի բյուջեով հաստատվել է նախագծման գումարը: Աղի լճի միջավայրի բարեկարգման մասով մրցույթը կայացել է և կա կազմակերպություն, որը կպատրաստի նախագիծը: Ամբողջովին այդ միջավայրը ձևավորելու ենք և տվյալ հատվածը բնակիչների համար կդառնա ժամանցի ժամանակակից վայր:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյան, խնդրեմ:

Արմեն Գալջյան

-2024 թվականի դեկտեմբերի ամսին ընդունված որոշմամբ կարմիր գծանշումով ավտոկայանատեղիների ցանկում ավելացան նոր փողոցներ:

Ուզում եմ իմանալ ի՞նչ ընթացքում է այդ փողոցների կահավորումը, մասնավորապես՝ Հյուսիսային պողոտայում գծանշումների և տեսախցիկների տեղադրման աշխատանքները:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը:

Վազգեն Հարությունյան

-Պարոն Գալջյան, նոր փողոցները ներառված են այս տարվա աշխատանքային ծրագրում: Ներկայումս իրականացվում են 28 փողոցի արտաքին լուսավորության հետ կապված աշխատանքները: Միաժամանակ, նյութերի ձեռքբերման մրցույթներն են հրապարակված նշված փողոցներում կահավորման աշխատանքներ իրականացնելու համար: Առաջիկա ամիսներին, ըստ հերթականության, կարմիր գծանշումները փողոցներում տեսանելի կլինեն: Ենթադրվում է առաջին փողոցը պատրաստ կլինի 1-1.5 ամսվա ընթացքում:

Տիգրան Ավինյան

-Ավարտվեց հարց ու պատասխանը:

Ավագանու հարգելի՛ անդամներ, հարգելի՛ գործընկերներ, Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 1-ին նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Կազմող՝
Կազմակերպական վարչություն